ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ- 301
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» «07» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, և «Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարան» ՀՈԱԿ-ը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Կարինե Վիրաբյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել «Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարանիցուցադրության փոփոխություն և կահավորման թարմացում» ծրագրի իրականացման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1) և ծախսերի նախահաշվի (Հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ***Պետական մարմինը պարտավոր է՝***

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հուլիսի 19-ի N 1334-Ա/2 հրամանի՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Թանգարանային ծրագրեր և միջոցառումներ» ծրագրի շրջանակներում դրամաշնորհի հատկացման մասնագիտական խմբի 2022 թվականի հունիսի 22-ի նիստի N 3 արձանագրությունը՝ Կատարողին հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1075. Մշակութային ժառանգության ծրագրի» «11004. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. ***Պետական մարմինն իրավունք ունի՝***

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը,

միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ. ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել **«Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով**,

2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.4. *Կատարողն իրավունք ունի՝*

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 2299,2 հազար (երկու միլիոն երկու հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելվածի N 2-ի,

3.2.Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «Հայաստանի Հանրապետոիթյան 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կատարողի միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ: Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը Հավելված N3) և հաշվետվությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին,

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պետական մարմինը պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը,

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կատարողը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով

դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ,

4.4. Եթե Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պետական մարմինը իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի նոյեմբերի 21-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 12 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարան» ՀԱՈԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ՀՀ,Շիրակ, Վարպետաց /91, Գյումրի 3101,
Կառավարական տուն N 2	«Արարատ բանկ» ԲԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ1510039928810100, հվհհ 05520545
Հ/Հ 900011032399 հվհհ 02698732	Տնօրեն՝ Կ. Վիրաբյան
Գլխավոր քարտուղար՝ Գ. Սաֆարյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ. Տ.
Կ. Տ.	

02698732

Հավելված N 1
29.07 2022թ.
N 301 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարանի ցուցադրության փոփոխություն և կահավորման թարմացում»

1	Կազմակերպության անվանում	Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարան ՀՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Վարպետաց /91, Գյումրի 3101, Շիրակ, ՀՀ
3	Ծրագրի անվանում	Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարանի ցուցադրության փոփոխություն և կահավորման թարմացում
3.1	Բովանդակություն	Թանգարանի էքսպոզիցիան և գույքը չի թարմացվել ավելին քան 20 տարի, գոյացել են մի շարք խնդիրներ, որոնք,Գյումրու աճող տուրիստական հոսքերի և թանգարանի այցելուների՝ տարեցտարի աճող քանակի հետ կարիք կա լուծելու: Այսպես. - Թանգարանի էքսպոզիցիան, հատկապես 4 սրահներում, որտեղ ներկայացվում է հեղինակի գրական-գեղարվեստական ժառանգությունը, կարիք կա թարմացնելու, հարստացնելու և նորովի ներկայացնելու - Որոշ նմուշներ ցուցադրվում են բաց վիճակում, և ներկայումս, պահպանության և պատշաճ ներկայացման տեսակետից, նպատակահարմար է դրանք ցուցադրել փակ ցուցափեղկերում: Իսկ որոշ ցուցափեղկեր կարիք կա փոխարինելու նորերով - Կարիք կա նաև հեղինակի գրական երկերն ակնբախ

		ներկայացնելու այցելուներին, որպեսզի իրենք հենց նախամուտքից կարողանան ծանոթանալ Ավ. Իսահակյանի հարուստ գեղարվեստական ժառանգությանը - Թանգարանը կարիք ունի կետային լուսավորության լամպերի, քանի որ ներկայիս լամպերը ապահովում են զուտ ընդհանուր լուսավորություն - Թանգարանի գորգածածկը չի թարմացվել մոտ 20 տարի: Ներկայումս հնամաշ վիճակում է Ներկայիս ծրագրի շրջանակներում նպատակ ենք դնում լուծել այս բոլոր խնդիրները: Թանգարանի էքսպոզիցիան բովանդակային առումով հարստացվելու և թարմացվելու է էքսպոզիցիոն նոր, մշակված կոնցեպտին համապատասխան: Ձեռք են բերվելու նոր՝ առանձին և պատերին կից՝ ընդհանուր առմամբ 10 ցուցափեղկեր: Շարժական պատերի և մեծ պաստառների (գիպսոկարտոնից, ՊՎՔ շերտերից) միջոցով հենց նախամուտքից այցելուներին ներկայացվելու են հեղինակի ստեղծագործությունները: Ձեռք բերված կետային լուսավորության լամպերի միջոցով թանգարանում ընդգծվելու են էքսպոզիցիայի կարևոր ցուցանմուշները՝ սևեռելով այցելուների ուշադրությունը դրանց վրա: Նոր գորգածածկը լիովին կթարմացնի այս սրահների ընդհանուր տեսքը: Թանգարանը կթարմանա և այցելուներին կներկայանա ժամանակակից ոգով:
3.2	Նպատակ	Կատարել Գյումրիի Ավ. Իսահակյանի հուշատուն-թանգարանի էքսպոզիցիայի թարմացման և նորոգման աշխատանքներ

3.3	Անցկացման ժամկետ	01.08.2022 - 20.11.2022
3.4	Անցկացման վայր	Վարպետաց /91, Գյումրի 3101, Շիրակ, ՀՀ
3.5	Ակնկալվող արդյունքներ	-Թանգարանի էքսպոզիցիան կփոփոխվի և կթարմացվի չորս սրահներում, կհարստանա բովանդակությունը և կհագենա նոր գույքով -Նոր ցուցափեղկերի միջոցով հուշատուն-թանգարանի այցելուներին ավելի վայելուչ կներկայացվեն հեղինակի անձնական իրերը, փաստաթղթերը, նամակները և այլն: Հնամաշ և ժամանակակից թանգարանի պահանջներին չհամապատասխանող որոշ ցուցափեղկեր կփոխարինվեն նորերով -Թանգարանը կունենա կետային լուսավորություն թանգարանի 4 սրահներում, ինչը հնարավորություն կտա ընդգծել նոր էքսպոզիցիան -Թանգարանի 2 ցուցասրահների հատակի ծածկը 60 քառ.մ՝ գորգածածկը արդեն հնամաշ է: Փոխարինելով այն՝ թանգարանի ընդհանուր ընկալումը կդառնա էլ ավելի գրավիչ: -Ըստ մեր կոնցեպտի, կարիք կա, որ հենց նախամուտքից Ավ. Իսահակյանի ամենաշքեղ ստեղծագործություններից հատվածներ տեսանելի լինեն բոլոր այցելուներին: Գիպսոկարտոնով շարժական պատեր, ՊՎՔ շերտերի միջոցով,մեծ և գեղեցիկ դիզայնով պաստառներ կտեղադրվեն՝ գրավելով այցելուների ուշադրությունը:

3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Ծրագրի արդյունքում կշահեն Ավ. Իսահակյանի հուշատուն-թանգարանի այցելուները, Ծրագրի արդյունքում կունենանք այցելուների աճ՝ Դպրոցականներ տարեկան՝ 10000 Մեծահասակներ տարեկան՝ 5000 Ծրագրի արդյունքում կշահեն նաև թանգարանի աշխատակազմը, որը աշխատելու է ավելի բարեկարգ պայմաններում: Նորոգված, նոր գույքով և թարմացված ցուցադրությամբ թանգարան այցելել ցանկացողները էլ ավելի շատ կլինեն Գյումրու համայնքապետարանը: Նորոգված թանգարանի այցելուների քանակի ավելացման հետ կապված թանգարանի եկամուտը ավելի շատ կլինի: Համայնքապետարանն էլ կկարողանա թանգարանի ֆիզիկական սպասարկմանն ավելի շատ գումարներ ուղղել;

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032399, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝ Գ. Մաֆարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարան» ՀԱՈԿ
ՀՀ,Շիրակ, Վարպետաց /91, Գյումրի 3101,
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ1510039928810100, հվհհ 05520545
Տնօրեն՝ Կ. Փիրաքյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«29» «07» 2022 թ.
N 301 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարանի ցուցադրության փոփոխություն և կահավորման թարմացում»

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Վարձատրության ծախս, ներառյալ հարկերը, այդ թվում՝**				**640.0**
	համադրող	ամիս	2	80.0	160.0
	նկարիչ-դիզայներ	մարդ/ամիս	2/2	80.0	320.0
	հաշվապահ	ամիս	2	80.0	160.0
2	**Կազմակերպչական ծախսեր, այդ թվում՝**				**1,276.0**
	առանձին ցուցափեղկի պատրաստում	հատ	3	100.0	300.0
	պատին կից ցուցափեղկի պատրաստում	հատ	3	100.0	300.0
	գորգածածկ	քառ. մետր	60	3.0	180.0
	ռելսեր (կետային լամպերի ամրացման մետաղական հիմքեր)	հատ	20	5.0	100.0
	կետային լամպեր	հատ	50	4.0	200.0
	գիպսակարտոն շարժական պատի պատրաստում և տպագրություն	հատ	19	4.0	76.0
	ՊՎՔ շերտերի պատրաստում և տպագրություն	հատ	6	20.0	120.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**1,916.0**
	ԱԱՀ*				**383.2**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**2,299.2**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032399, հվհհ 02698732

Գլխավոր քարտուղար
Գ. Սաֆարյան

ԿԱՏԱՐՈՂ՝

«Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարան» ՀԱՈԿ
ՀՀ,Շիրակ, Վարպետաց /91, Գյումրի 3101,
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ1510039928810100, հվհհ 05520545

Տնօրեն՝ Կ. Վիրաբյան

Հավելված N 3
2022 թ. 02 29 -ին
կնքված N 301 պայմանագրի

Կատարող	Պետական մարմին
______________	______________
գտնվելու վայրը ______	գտնվելու վայրը ______
հհ ______	հհ ______
հվհհ ______	հվհհ ______

ԱԿՏ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ...Ի ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   » «   » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________

Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված --- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ պայմանագրի
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
______________	______________
ստորագրություն	ստորագրություն
______________	______________
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ	Կ.Տ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարան» ՀԱՈԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ՀՀ,Շիրակ, Վարպետաց /91, Գյումրի 3101
Կառավարական տուն N 2	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
Հ/Հ 900011032399, հվհհ 02698732	Հ/Հ1510039928810100, հվհհ 05520545
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն Կ. Վիրաբյան
Գարեգին Սաֆարյան	
______________	______________
/ստորագրություն/	ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.